


նունից, որ յունարէնում Մօսքոս է, իսկ հայ ձեռագիրների մէջ, հաւանօրէն, աղճատմամբ Տորքոս է դառել: Բայց այդ ենթադրութիւնը պ. Խալաթեանը ոչ մի բանի վրայ չէ հիմնուած: Ծախ քան այդ, Ծա մեզ պէտք է աւեր թէ Խորենացին առասպել «սարքելիս» ինչու անպատճառ Եւսերիոսից մի անուն պիտի վերցնէր և հայացնելու համար ու վերջապետութիւնը դուրս ձգէր: Մի՞թէ հայ անուններ պահատում էին նորան, և կամ ինքք կարող չէր օրէէ արմատից մի անուն շինել: Ասենք թէ Խորենացին անուն չէր գտնում և անպատճառ Եւսերիոսից էր կամենում վերցնել, բայց սպացուցել է պ. Խալաթեանը, որ Խորենացու ձեռի տակ եղած Եւսերիոսի օրինակի մէջ Մօսքոսն արդէն Տորքոս է դարձած եղել: Ասենք թէ այդ էլ եղել էր, Բայց այն ժամանակ սպացուցել է արդեօք պ. Խալաթեանը թէ Խորենացու բնագրի մէջ Տօրք է եղել և ոչ Տուրք: Բայց այս սպացուցանելու մասին նա չէր էլ մտածիլ, քանի որ նորան միայն Լամբրոնացու օրինակն է յայտնի եղել Տուրք ձեռով, մէկ էլ Ասողկիրը:

(Շարունակելի)

Մ. Արեղեան.



Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԳՐ. Կ. ՌԷԿԼԱՄԻ.

Ա.

ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ.

(Շարունակութիւն) *

Կերակրի բնութիւն. Մենդարար և դիւրամարս կերակուր ուտելու մենք աւելիքիչ ենք ուտում, քան երբ ուտում ենք դժուարամարսը: Մարտողութիւնն այն է, որ կերակուրը ստամոքսի և աղիքների

մէջ փափկում է հիւթերի շնորհիւ և դառնում է արիւն: Քանի կերակուրը հեշտութեամբ է մարսուում և որքան աւելի նիւթեր է պարունակում, որ նպաստում են արիւն կազմելուն, այնքան նա աւելի դիւրամարս է և մենդարար: Բուրբոլին առողջ մարդը, եթէ միջակ աշխատող է և բաւականաչափ հանգստանում է, իւր քաղցն ու ծարուրը յաղեցնելու համար օրուան ընթացքում կերակուր պիտի ընդունի այն հաշուով, որ նորա 1/3 լինին պինդ նիւթեր (միս, ձու, պանիր, հաց, բանջարեղէն և իւր), իսկ 2/3 կամ մինչև անգամ աւելին՝ ջրի (Չուր, կաթ, սուրճ, մսաջուր, դարձուր և գինի):

Առողջութիւն պահպանելու համար պինդ կերակուրը ըստ կարելւոյն բազմաաեսակ պիտի լինի. մեծ մասամբ գործ են անում հաց և բուսեղէն կերակուր, իսկ դոցա վրայ աւելացնում են՝ հարկը պահանջած ժամանակ կամ հանդամանքներին նայելով, կենդանական թագաւորութիւնից աւելի դիւրամարս բաներ (պանիր, ձու, միս, ճարպ կամ իւր): Կերակուրը համեղացնելու համար համեմում են աղով, պղպեղով, մանանխով և այլն: Եթէ ինչպէս ցանկանում է: [Յիշեալ առարկաներից մարդու համար ամենից աւելի հարկաւորները նոքա են, որ նպաստում են մարմնի անմանը, վերադարձնում են աշխատութիւնից կորցրած նիւթը և վերջապէս կազմուածքի համար անհրաժեշտ ջերմութիւնն են տալիս]:

Բուսեղէն կերակուրն անհրաժեշտ է, որովհետեւ միայն կենդանական կերակրով մենք չենք կարող ոյժ հաւաքել երկարաեւ և յոգնեցուցիչ աշխատանքի համար, բացի թերևս այն դէպքից, եթէ շատ մեծ քանակութեամբ ուտենք այդ կերակրիցը: Այս հանդամանքը առիթ է աուել կազմելու այն միանգամայն սխալ կարծիքը, թէ օդաւար է բացառապէս բուսեղէն կերակրով սնունդ առնելը:

Բայց չպէտք է մոռանանք որ բուսակերները ծանրաբեռնում են իրենց կազմուածքը՝ չափազանց մեծ աշխատանք տալով իրենց ստամոքսին ու աղիքներին, որովհետեւ նորա պէտք է աւելի մեծ քանակութեամբ կերակուր ուտեն, քան խառն կերակրով սնուողները: Այս յառաջ է գալիս նորանից, որ բուսեղէն կերակրի մէջ եղած սննդարար նիւթերը կամ դժուարութեամբ են մարսուում կամ ընտել են մարսուում մեր մարտողութեան գործարաններում, ուտակ երկար են մնում ստամոքսի ու աղիքների մէջ և չեն տալիս այն օգուտը, որ կարելի էր սպասել նոցանից: Կենդանական կերակուրն, ընդհակառակը, հեշտութեամբ է մարսուում և տալիս է մեզ իւր մէջ եղած բոլոր սննդարար նիւթերը, բայց միայն այն ժամանակ, երբ լաւ են պատրաստում և

* Տես Արարատ 1900 թ. համար Ա. եր. 39:

կանոնաւորացէս ուտում. այս խոկ պատճառով նա մարդու աւելի շատ է ամբօցնում և աւելի շուտ քան բուսեղէն կերակուրը:

Մարտոգորիւնն սկսուում է բերանում հենց ծամելու ժամանակ, որի շնորհիւ կերակուրը ոչ միայն մանրանում է, այլ և լորձոնքով ծածկուում և նախապատրաստուում է ստամոքսի և աղիքների կատարելիք գործողութեան համար: Աւտի ինչքան լաւ ծամենք կերակուրը, այնքան աւելի հեշտ է նա մարտուում և այնքան աւելի սննդաբար նիւթեր է մատակարարում արեանը:

Այս պատճառով ամեն խելացի մարդ կերակուր ուտելիս պէտք է նստի և ոչ թէ ման գայ կամ կանգնած լինի, պէտք է ուտէ առանց շտապելու, իսկ ուտելուց յետոյ պէտք է փոքր ինչ հանդատանայ, որպէս զի ստամոքսը անարգել կարող լինի կատարել իւր գործը և կերածը իրական օգուտ ապ, այն է՝ նոր ցանկութիւն և կարողութիւն աշխատելու:

Մարտոգորութեան նպաստելու համար օգտակար է ուտելուց փոքր ինչ յետոյ մի բաժակ ջուր խմել: Ճաշելուց յետոյ մի կէս ժամի շափ կամ մինչև անգամ ամբողջ մի ժամ մարդկանց մեծ մասի գլուխը թեթեւ պտոյտ է գալիս: քունը տանում է և ծուլանում են աշխատելու: Բայց բաւական է մի բաժակ ջուր խմեն և ահա մի քանի րոպէից յետոյ նոքա կրկին իրենց առողջ են դուրս և թարմացած:

Ուտելու համար պէտք է որոշեալ ժամեր նշանակուին և այդ ժամանակ պէտք է կուշա ուտել. իսկ նշանակուած ժամանակի միջոցներում ուտելը շատ վնասակար է, որովհետև ստամոքսն ու աղիքները (ինչպէս և ինքը մարդը) աշխատելուց յետոյ պէտք է հանգիստ առնեն: Այն երեխաները, որոնց բան են տալիս ուտելու յաճախակի և անկարգ կերպով, շատ շուտ շուտ հիւանդանում են, նոյնպէս էլ մեծերն են նիհարում ու շուտ շուտ հիւանդանում:

Պինդ կերակրները (օր. քաղթու հաց, կարտոֆիլ, պինդ միս) պէտք է աւելի լաւ ծամուին, որովհետև կերակուրը ինչքան լաւ մանրանայ, այնքան աւելի հեշտ է մարտուում և աւելի սննդարար է լինում: Պինդ կերակրին փոքր ինչ իւր կամ ձարով աւելացնելը միշտ օգտակար է, մանաւանդ լաւ է վրայիցը մի բան խմել:

Հաս փախուկ կերակրները (օր. ջրալի խաշիլ, երեսը քաշած կաթ) ոչ միայն աւելի համեղ են լինում, այլ և աւելի զիւրամարս, եթէ մարդ ուտէ հացով և աղով: Եթէ կաթը գործ է ածուում առանց հացի, ցաւ է պատճառում ստամոքսին: իսկ հացով շատ օգտակար է: Միւս կերակրները (օր. վարունգ, թթու կաղամբ)

կարտոֆիլի սալաթ, իւրալի տաւարի միս) դժուարամարս են դառնում միայն այն պատճառով, որ սովորաբար կուլ են տալիս առանց լաւ ծամելու: Բայց եթէ այդ կերակրները հետ միասին մարդ հաց էլ ուտէ և լաւ ծամէ, նոքա էլ մեծ մասամբ զիւրամարս են դառնում և չեն ծանրաբեւում ստամոքսը:

Մսեղէն կերակուր. Մսեղէն կերակրներն են միսը, ձուն և թարմ սպիտակ մաճառակը (ալարոզ), նմանապէս և իրենց բաղադրութեամբ նոցա մասիկ պատիճաւոր բոյսերը (լորի, սուպ և սիսեւ): Սոքա բոլորը միասին կազմում են մի առանձին խումբ և պարունակում են շատ «ուի սպիտակուց» կամ ուրիշ նիւթեր, որ մօտ են նորան, օրին. «կաղէին» և «լեզու մին»: Պանտաւոր պատրաստուած մսեղէն կերակուրը շատ զիւրամարս է և Ֆիզիքական ծանր աշխատանք ունեցողներին լաւ ամբօցնում է, եթէ այն ուտում են ուրիշ կերակրների հետ. մանաւանդ օգտակար է մսեղէն կերակուրը առողջացողների համար:

Չաւ, հում կամ թերխաշ, պատուական սննդարար նիւթ է. Պինդ խաշած ձուն դժուարութեամբ է մարտուում ստամոքսի մէջ. բայց եթէ լաւ ծամուի, այն էլ զիւրամարս կը լինի: Սպիտակուցը աւելի զիւրամարս է, քան զկոնուցը. առաջին 14 մասը քիմիապէս մաքուր սպիտակուց է և 86 մասը ջուր. երկրորդը բաղկացած է սպիտակուցից և մի քանի դունաւորուած իւղերից: Չուն կեանք է տալիս իրենից դուրս եկող թռչունն, որին իրբև սնունդ ծառայում է կծեպի մեծ մասը՝ ջրկացած: Չուն փոշկացրած կծեպի հետ միասին պատուական կերակուր է երեխաների համար, որովհետև նպաստում է առամների և սոկրների աճմանը. հում կամ թերխաշ ձուն շատ օգտակար է սակաւարին և զժողութեալու ունեցող կանանց համար: Այն կերակրները որ պատրաստուած են ձուից, քիչ ալիւրից և շատ իւղից, դժուարամարս են, մինչդեռ որոնց մէջ շատ ալիւր կայ և քիչ իւր սննդարար են և օգտակար, եթէ աւելացնենք նոցա և աղ ու պղպեղ: Հում ձուն եթէ խառնենք սուրճի, քաղցր ջրի կամ մօի արգանակի մէջ, կ'ստանանք մի պատուական զովացուցիչ և կաղզուրիշ կերակուր, մանաւանդ ճանապարհի համար, միայն անպատճառ պէտք է գործ ածել ամբողջ ձուն, այսինքն՝ զեղնուցն ու սպիտակուցը միասին:

Միսը, իրբև սննդարար նիւթ, դանադան արժէք է ունենում: խաշելով թէ ինչի միս է և ինչպէս է պատրաստուած: Աշխարհի միտք, որսի միտք, թռչունները (աղաւնի, հաւ, կաբաւ) շատ զիւրամարս են մինչև անգամ թոյլ ստամոքսի հա-

մար: Իւզալի ոչխարի միտը, խողի, եզան և ձիու միտը ամենալաւ կերակուր են առողջ մարդու համար: [Խողի միտն առ հատարակ պէտք է լաւ խաշուած կամ խորովուած լինի, այնպէս որ մէջը վարդագոյն չլինի, որովհետեւ միտն այդպէս պատրաստուած խողենին կարող է զերծ լինել արտիկից]: Հորթի միտը ամենից պակաս սննդաբար է և շատ դժուարամարս է: մանուանդ եթէ շատ խաշուած կամ տապակուած է լինում իւզով, հորթի միտը պէտք է պինդ լինի, հիւթալից և կարուած ժամանակն ունենայ բաց վարդի գոյն: Սագն ու բազն էլ շատ դժուարամարս են և երեխաներին ու հիւանդներին պէտք է աւել մեծ զգուշացումով խեամբ: Իսկ ամենալաւ ու զիւրամարս մսեղէն կերակուրը խաշած կամ ապխտած լեարդի (սև թորթի) երշիկն է (կալաւասա), եթէ միտն սա պատրաստուած է առանց ալիւրի, հորթի մսի, բրնձի և չն, խառնուրդի:

Լաւ խաշած միտ պատրաստելու համար պէտք է առաջուց եռցնել ջուրը, որի մէջ ձգուում են արմաղք, համեմունք և աղ, ջուրը եւ գալուն պէս՝ միտը ձգում են մէջը, այսպէսով ստացուում է ոչ թանձր մտաջուր և համեղ սննդաբար խաշած միտ (խաշլամայ): Իսկ թանձր մտաջուր ստանալու համար միտը ձգում են հենց սառը ջրի մէջ, միտն էլ առաջուց մանր մանր կտորուում են, որ ջուրը տաքանալիս մսի բոլոր սննդաբար հիւթերն իւր մէջ առնէ, այս ձևով եփած միտը չոր է լինում: Թեղ թեղ և անհամ:

Մտաջուրը որ ամէնքն էլ սիրով են ուտում, պատճառն այն է որ տաք է լինում— ջերմացնում է ստամոքսն ու մարմինը, զրգուում է մարդու, բայց բնաւ սննդաբար չէ:

Ճաւարի մտաջուրը (բուլիօն) այնպէս, ինչպէս որ սովորաբար պատրաստում են, աւելի վնասակար է, քան օգտակար, տաք տաք ուտելիս ստամոքսը է փշայնում, ցաւ ու բորբոքումն է յառաջ բերում ստամոքսի մէջ, բացի դորանից կարճ ժամանակով լցնում է ստամոքսը և ոչինչ սնունդ չէ աւելիս արեանը, բացի գուցէ այն զէպրից, եթէ նորա մէջ ձու կամ այլ այդպիսի սննդաբար բաներ ձգուին: Թանձր մտաջուրը պատուական կազդուրիչ միջոց է երեխաների, ծերերի և առողջացողների համար: Համեղ և զիւրամարս է նմանապէս արորած և մաղի միջով անց կացրած կարտոֆիլից, արմաղքներից ու պտածաւոր պտուղներից պատրաստուած ապուրը, որ մինչև անդամ մտաջրից սննդաբար է, այդ ապուրին մտաջրի համ տալու համար կարելի է աւելացնել մի փոքր մսի հիւթ: Սովորաբար ամեն բուլիօն աւելի համեղ ու սննդաբար է լինում, երբ շատ կանաչեղէն են ձգում մէջը: Գարնջրի բուլիօնը շատ լաւ երեկոյան կերա-

կուր է և երբ համեմուած է լինում տաք կոծով, լաւ ջերմացուցիչ միջոց է դառնում ձմեռային ճանապարհորդութեան ժամանակ: Բայց պէտք չէ մոռանալ որ նոյն իսկ ամենալաւ բուլիօնը թոյն է դառնում, երբ տաք տաք են ուտում:

Պակիր. Թարմ մածուակը (ալարօզ), եթէ հեռը խառնուում է աղ, ծեծած չաման և քիչ կաթ, դառնում է այնպիսի մի սննդաբար նիւթ, որ ոչնչով պակաս չէ մտից, իսկ զիւրամարսութեան կողմից նորանից էլ զերազանց է: Կարտոֆիլի կամ ձաւարի հեա միտին մածուակը պատուական կերակուր է: Թարմ պանիրը կարող է բոլորովին մսի տեղը տալ, իսկ հինդուրս կանգնած պանիրը ծառայում է միայն որպէս համեմունք և ախորժակ զրգուող ճաշակիկը, այդպիսի պանիր կարող են ուտել միայն հասակաւորները, իսկ երեխաների համար վնասակար է:

Իւղեր. Իւղը (կաթի մէջ եղած ճարպը), կենդանիներից ստացուող ճարպերը կամ իւզալի միտը շատ կազդուրիչ կերակուր է մանուանդ այն մարդկանց համար, որոնք ծանր ֆիզիկական աշխատանքով են պարսպում, երկար ժամանակ գտնուում են բաց օդում, ցրտի են ենթարկուում և ծանր կերակուր են ուտում: Իւղերի շնորհիւ մարդու մարմնին յատուկ ջերմութիւնը միշտ մի և նոյն է մ'նում ամառ ձմեռ, որովհետեւ օդի միջից մեր ներշնչած թթուածինը միանում է արեան մէջ անխաճնի հեա, իսկ վերջինս արեանը մատակարարում են գլխաւորապէս իւղերը և ապա միայն շաքարն ու ուրիշ նիւթեր, որոնք ալիւր են պարունակում:

Իւղերը նպաստում են նաև մարտոգութեան մատամբ այն պատճառով, որ նոքա ծառայում են մսեղէն նիւթերը լուծելու համար, և մասամբ որ կերակրի կտորները իւղով պատուելով աւելի լաւ են միմեանց կաշում և դորանով հեշտանում է ստամոքսի պատերի մկանունքի գործը: Բոլոր իւղերից թարմ կարագը և զէյթունի (ձիթապտուղ) ձէթը ամէնից զիւրամարսն են և զրեթէ երբէք չեն ծանրացնում ստամոքսը, նոյն իսկ եթէ մեծ քանակութեամբ ուտուին: Իսկ եթէ, ընդհակառակը, նոքա տաքացրած և մանուանդ զաղ արած լինին՝ շատ վնասակար են մարտոգութեան գործարանների համար: Մի և նոյնը կարելի է ասել և կենդանիների ճարպի մասին. օր, բոլորովին սպիտակ և միջակ տաքութեամբ հալած խողի ճարպը բնաւ չէ ծանրաբեռնում ստամոքսը, մինչդեռ փոքր ինչ զեղին և աւելի մեծ տաքութեամբ պատրաստուած ճարպը վնասում է նորան: Հարաւային երկիրներում զէյթունի ձէթը կարագի տեղ է բռնում. ձիթապտուղ չեղած տեղերում պէտք է աւելի ուշազրութիւն դարձնել քնջութի, խաշխաշի

կտաւապի թարմ ձէթի վրայ: Կենդանիները ճարպից և բուսական իւղերից (ձէթ) պատրաստուած արհեստական իւղը միանդամայն անվնաս է: Եթէ խնամքով է պատրաստուում: Դորստուած վնասը միայն այն է, որ արհեստական իւղը կտփի իւղի անդ և վերջնի դնովն են վաճառում:

Մննդաուժեան տեսակէտով մի և նոյն բանն է կենդանիների կամ բուսեղէն իւղ գործածելը: այդ միայն ճաշակի գործ է: Բուժական տեսակէտից խողի կամ եղան ճարպը մի և նոյն ներդործութիւնն է անում: Ընչպէս և յաճախ գովարանուած շան, ոչնու, եղջերուի և արջի ճարպը: Հասարկ կարծում են թէ չեն կարող իւղալի կերակուր ուտել՝ առանց վրայից մի բժ-պանակ օղի խմելու: Բայց եթէ գորս փոխարէն նոքա ուտեն մի կտոր հաց աղ ու պղպեղով, ամենեւին չեն զգուիլ իւղալի կերակրներից: Աւելորդ չէ լինել ասելու որ ամառն առհասարակ աւելի քիչ պէտք է գործածել իւղալի նիւթեր: քան ձմեռը, երբ մեր մարմինն աւելի է ջերմութիւն կորցնում:

Շաճարք (շաքարի եղէգնի հիւթից, իսկ մեծ մասամբ բաղկից (ճակնդեղ) պատրաստուած) և մեղրը ոչ միայն քաղցը և ակորթելի համեմունք են մեր կերակրների համար, այլ և չափազանց դիւրամարս անդարար նիւթեր են: Դոքա մնասում են ատամներին ու ստամոքսին միայն այն դէպքում, երբ գործ են անում առանց համեմունքի, օր. երբ ուտում են կարծր շաքար: Բայց այնու ամենայնև ամենայն օր քաղցրեղէն ուտող մարդը դորս մնասակար հետեանքները կը նկատէ վերջ և վերջոյ:

(Կը շարունակուի)



Մ'ԱՆՐԱԼՈՐԲ

Քիմիական լուցիտ առայն ճանաչողը. — „Petit Temps“ թերթի խօսքերն նայելով, մի քանի ամիս որանից առաջ, Ֆրանսիայի ժիւրա նահանգի Սան—Լուէր փոքրիկ քաղաքի հրապարակի վրայ մի համեստ արձան են կանդնեցրել և յիշատակ կարլ Վարկ Սուխայի որն ամենից առաջ դատարիմական լուցիկն:

Սուխան գիւղական, հասարակ բժիշկ էր. սակայն վերոյիշեալ նահանգի բոլոր գիւղացիներին խիստ լաւ յայտնի անձնաւորութիւն: Նա զեռ 17 տարեկան հազիւ կար, երբ դատար քիմիական լուցիտ պատրաստելը:

Մի անգամ, 1830 թուին, Գոլն ուսում-

նարանի ուսուցիչը, որակց սովորում էր Սուխան, իր աշակերտների առաջ մի այսպիսի հետաքրքիր փորձ կատարեց. սանդի մէջ քլորաթթուի արնկաղ, մի քիչ էլ ծծումբ լցրեց և երբ սանդի տուով սկսեց ծեծել խառնուրդը, բուսական ըարձր ձայն լսուեցաւ: սակայն առանց լոյս կամ կրակ արձակելու: Հէնց այս շնչին հանդամանքը Սուխայի հետաքրքրութիւնը շարժեց և գլխաւոր առիթն եղաւ նրա անմահանալուն: Իր սենեակը վերադառնալով, նա սկսեց ինքն իրեն մտածել. «Եթէ այս խառնուրդի վրայ որ և է մի ուրիշ դիւրալաւ նիւթ աւելացնելու լինինք, օրինակ լուսակիր կամ մի ուրիշ նման բան, արդեօք հնարաւոր չի լինիլ կրակ էլ ստանալու: Այս օրպէս զի կարողանար լուսակիր, ինչպէս և ուրիշ հարկաւոր նիւթեր ձեռք բերել, Սուխան որոշեց օդուտ քաղել առաջիկայ արձակուրդներից և մտախի բարեկամութիւն էլ հաստատեց իրենց քաղաքի դեղագործի հետ: Նա հասաւ իր նպատակին. բարի դեղագործը համաձայնեցաւ նրան առանց դեղատոմսի ծծումբ և այլ անհրաժեշտ նիւթերը տալու: Այդ օրուանից Սուխայի սենեակն իսկական գործարանի փոխարեւեցաւ: Փորձերն անընդհատ կրկնուած էին, բայց ոչ միշտ էլ յաջող ու անվնաս: Մի քանի անգամ մեր անզգայն քիմիկոսը վտանգաւոր վէրքեր էլ ստացաւ: սակայն գործից յետ կանգնել մտքովն անգամ չէր ուզում անցկացնել մանաւանդ որ փորձերը, կարծես, բարեյաջող եւք էին խոտաւնում: Նա այդ միջոցում մի նոր մեղք էլ յղացաւ. մտածեց թաթախել փայտի կտորի ծայրը իր պատրաստած խառնուրդի մէջ, յետոյ տաք քլորաթթուի շաղակի մէջ մտցնել և ապա շինել պատին, որի վրայ առաջուց լուսակիր էր քսել: Նրա հիացմունքն չափ չկար, երբ յանկարծ վառուող լուցիտ բոցը տեսաւ: Նա շտապեց և շուտով մի քանի այդպիսի լուցիկներ էլ պատրաստեց: Նոյն այդ լուցիկն սենեակի դուռը բացուեցաւ և նրա ընկերներից մէկը ներս մտաւ: «Նայելի, աղաղակեց Սուխան, ես կրեմ այս փայտի կտորը պատին և նա խելոյն կլաւառի»: Իսկ ընկերը չտեսնուած երևոյթից գլուխը կորցնելով, սենեակից դուրս թռաւ և սկսեց ամեն մի պատահողի պատմել ու ասել, թէ Սուխան նոր տեսակի լուցիկ է գտել, որն ինքն իրեն վառուում է: Երեսուտարդ Սուխան լուցիկ պատրաստելու արտօնութիւն աշխատեց ձեռք բերել, սակայն այնքան փող չունէր, որ կարողանար անբութիւնից պահանջուած 1500 Ֆր. տալ:

Երկու տարուց յետոյ արդէն ամէն տեղ այդպիսի լուցիկներ էին վաճառում, բայց ոչ իբրև ֆրանսիական, այլ դերմանական մտքի ու աշխատանքի արգիւնք: Էլիզաբեթուրդ քաղաքի